

Ֆակտորինգի համար պահանջվող փաստաթղթերի ցանկ

- Հաճախորդի և Պարտապանի կողմից ստորագրված և կնքված առևտրային կամ մատակարարման պայմանագիր,
- հաշիվ-ապրանքագիր (1 պատճեն),
- տրանսպորտային բեռնագիր (1 պատճեն),
- արտահանման բեռնամաքային հայտարարագիր (1 պատճեն),
- ապրանքի/ծառայության հանձնման-ընդունման ակտ (1 պատճեն),
- ՀԱԱԳ հետ համագործակցության ծրագրի շրջանակներում արտահանման ֆակտորինգային գործարքի դեպքում ՀԱԱԳ կողմից ապահովագրության առաջարկ,
- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթղթեր,
- գործունեության տարածքի/ների սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր
- լիցենզիա (լիցենզավորված գործունեության դեպքում),
- հարկային տեսչությունից տեղեկանք պարտավորությունների մասին,
- Էլեկտրոնային եղանակով Հարկային տեսչություն ներկայացված վերջին 1 տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցում,
- գրավ/ների սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,¹
- իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճեն (իր ներդիրներով) և ՀՎՀՀ-ի պատճեն (իրավաբանական անձանց դեպքում պահանջվում է ըստ անհրաժեշտության),¹
- տեղեկանք իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից,^{1,2,3}
- քաղվածք ռեստորից՝ բաժնետիրական ընկերության դեպքում,³
- իրավասու մարմնի (ընդհանուր ժողովի) որոշումը վարկ վերցնելու վերաբերյալ,³

¹ Փաստաթղթերը պահանջվում են, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են:

² Տեղեկանքը կարելի է ստանալ Բանկից կամ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, ընդ որում՝ իրավաբանական անձ հաճախորդների կողմից տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից պարտադիր է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականը իր ներդիրներով չներկայացնելու դեպքում:

³ Կարող է ներկայացվել Բանկի կողմից երաշխիքը տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո:

Բանկում հաշիվ չունենալու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև ,ԱԿԲԱ Բանկե ԲԲԸ-ում հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը (բնօրինակները):

Տարաբնույթ հանգամանքներից ելնելով Բանկի կողմից կարող է պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Բանկը, Փողերի վաճառման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» (“Know your customer”) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում տալ լրացուցիչ հարցեր: Հաճախորդի պատշաճ նույնականացման անհնարինության կամ հաշիվների սպասարկման անհնարինության դեպքում Բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը կարող է սահմանափակվել: Ինչպես նաև, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում, Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն: